

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՆՈՐԻԿԻ ՍԱՐՈՅԱՆ

ԻՄԱՍՏԱՅԻՆ ԺԵՏՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ ք. գ. դ., պրոֆեսոր Ե.Լ. Երզնկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ք. գ. դ., պրոֆեսոր Շ.Յ. Պարոնյան  
ք. գ. թ. Տ. Բ. Միքայելյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական)  
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. նոյեմբերի 5-ին, ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈՅ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. հոկտեմբերի 4-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար  
ք.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

Ժամանակակից լեզվաբանության մեջ ճանաչողական և գործաբանական գիտաճյուղերի ձևավորմանը համընթաց հնարավորություն է ընձեռվում նոր լույսի ներքո քննել մի շարք լեզվական երևույթներ և կարգեր: Նման կարգերի թվում իր ուրույն տեղն է զբաղեցնում Ժխտումը, որի դերն անփոխարինելի է հաղորդակցման գործընթացում: Լեզվաբանական նոր ուղղությունների զարգացմանը զուգահեռ հատկապես կարևորվում է Ժխտման կարգի դրսևորման բազմակողմանի ուսումնասիրությունը և առանձնահատկությունների վերհանումը:

Սույն ատենախոսությունը նվիրված է Ժխտման կարգի և դրա արտահայտման ներակա միջոցների իմաստային ու գործաբանական առանձնահատկությունների քննությանը:

Ժամանակակից լեզվաբանության մեջ գոյություն ունեն Ժխտման կարգին նվիրված բազմաթիվ աշխատություններ<sup>1</sup>, որոնցում, սակայն, ուսումնասիրվել են Ժխտման արտահայտման բացահայտ միջոցները: Ժխտման կարգի ներակա միջոցները, որոնց, թեև անդրադարձել են մի շարք լեզվաբաններ առաջարկելով տարբեր սահմանումներ ու ձևակերպումներ, դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն:

Կարծիքների բազմազանությունն անհրաժեշտություն է առաջացնում՝ համակողմանիորեն ուսումնասիրել ներակա Ժխտումը, վեր հանել դրա արտահայտման միջոցների իմաստային և գործաբանական արժեքն ու գործառույթները: Նախկինում կատարված լեզվաբանական հետազոտությունները և դրանցում առաջ քաշված տեսությունները մեծապես նպաստել են մեր ուսումնասիրությանը, ինչի արդյունքում գոյություն ունեցող տեսակետների հիման վրա առանձնացրել ենք լեզվական նոր դաշտ, որում ընդգրկված են լեզվի տարբեր մակարդակներում ներակա Ժխտում արտահայտող միջոցները:

**Թեմայի արդիականությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից լեզվաբանության մեջ մեծ տեղ է հատկացվում իմաստային կարգերի ուսումնասիրությանը: Առավել կարևորվում են Ժխտման ներակա

---

<sup>1</sup>Fodor J. A., Katz J. J. The structure of language: readings in the philosophy of language. New Jersey: Prentice Hall, 1964; Klima E. S. Negation in English // The structure of language, ed. by Fodor J.A., Katz J.J. New Jersey: Prentice Hall, 1964; Шендельс Е. И. Отрицание как лингвистическое понятие // Уч. зап. МГПИИЯ, т. 19, 1959; Clark H. H. Semantics and comprehension. The Hague: Mouton, 1976; Weinreich U. On the semantic structure of language // Universals of Language, ed. by J. Greenberg. Cambridge, MA: MIT Press, 1963; Horn L. R. A natural history of negation. Chicago: University of Chicago Press, 1989.

միջոցների քննությունն ու դասակարգումը, քանի որ ժխտման ձևերի ճիշտ կիրառումն անհրաժեշտ նախապայման է խոսքային հաղորդակցման ընթացքում տեղեկության փոխանցման արդյունավետության, ինչպես նաև դրա ճիշտ ընկալման համար:

**Չեղարկության նպատակն ու խնդիրները:** Ուսումնասիրության նպատակն է՝ քննել ներակա ժխտման արտահայտման միջոցները՝ վեր հանելով դրանց առանձնահատկությունները լեզվական տարբեր իրադրություններում: Եզված նպատակի իրագործման համար առաջադրվում են հետևյալ խնդիրները՝

- լեզվի տարբեր մակարդակներում առանձնացնել, ուսումնասիրել և համակարգել ներակա ժխտման միջոցները,
- դասակարգել ներակա ժխտական իմաստ արտահայտող միավորներն՝ ըստ ներակայման աստիճանի,
- վեր հանելով ներակա ժխտման ձևերը՝ որոշարկել դրանց իմաստային և գործաբանական առանձնահատկությունները,
- սահմանել անուղղակի ժխտման դերը հաղորդակցման գործընթացում՝ որոշարկելով ուսումնասիրվող կարգի իմաստագործաբանական արժեքը,
- դասակարգել ներակա ժխտման տեսակները՝ որոշարկելով դրանց բնորոշ լեզվական և արտալեզվական առանձնահատկությունները:

**Թեմայի ընտրությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ ժխտմանը նվիրված առկա ուսումնասիրություններում, հիմնականում, քննվում են ժխտման բացահայտ միջոցները<sup>2</sup>: Անհրաժեշտ խորությամբ չեն լուսաբանվել անգլերենի ժխտման ոչ բացահայտ միջոցները, դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն նաև դրանց արտահայտմանն ու ընկալմանը նպաստող իմաստային, գործաբանական, տրամաբանական գործոնները, որոնք սպառիչ պարզաբանման կարիք ունեն:

**Աշխատանքի նորույթն** այն է, որ համակողմանի քննության են ենթարկվել ներակա ժխտում արտահայտող միջոցներն ու դրանց բնորոշ իմաստային և գործաբանական առանձնահատկությունները: Առաջին անգամ ներակա ժխտում արտահայտող միջոցները համապարփակ կերպով ուսումնասիրվել են՝ իմաստային, գործառական, հաղորդակցական և գործաբանական հայեցակերպերով և դասակարգվել ըստ ներակայության աստիճանի:

---

<sup>2</sup> Chomsky N. Form and meaning in natural language // Communication. A discussion at the Nobel performances/ ed. by Rolansky J. D.. Amsterdam: North Holland Press, 1969; Quirk R., Greenbaum S, Leech G. et al. A comprehensive grammar of the English language. Longman, 1985; Ladusaw W. A. Expressing negation // Proceedings of the Conference on Semantics and Linguistic Theory, vol. 2. Ohio State University, 1992, etc.

Ուսումնասիրության արդյունքները համեմատվել են հայերենի՝ ժխտմանը բնորոշ առանձնահատկությունների հետ, որն էլ ապահովում է անգլերենում ստացված արդյունքների հավաստիությունը:

Սույն աշխատության համար մեթոդաբանական հենք են ծառայել Ֆ. դը Սոսյուրի, Օ. Եսպերսենի, Ա. Պեշկովսկու, Շ. Բալիի, Ա. Սմիրնիցկու, Ա. Բոնդարկոյի, Լ. Յորնի և այլ լեզվաբանների մշակած տեսությունները:

**Աշխատանքի նյութը:** Ուսումնասիրության համար նյութ են ծառայել ժխտական ներիմաստով բառերը, նախդրավոր բայական կառույցները, ներակա ժխտական իմաստով դարձվածքները (մոտ 4000 միավոր), ինչպես նաև գեղարվեստական գրականությունից ընտրված հատվածներ (թվով մոտ 1500 օրինակ): Աշխատանքում տեղ են գտել նաև օրինակներ առօրյա հաղորդակցումից:

**Վերլուծության մեթոդները:** Ուսումնասիրության մեջ ներակա ժխտական իմաստների բացահայտման, ինչպես նաև առաջ քաշված խնդիրների լուծման համար կիրառվել են նկարագրական, բառարանային բացատրությունների, բառային փոխակերպման, բաղդատական վերլուծության և զուգադրական մեթոդները: Ներակա իմաստների առավել խորքային մեկնաբանման նպատակով կատարվել է նաև համատեքստային վերլուծություն:

**Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը:** Աշխատանքում քննվող ներակա ժխտման արտահայտման ձևերի և միջոցների վերհանումը, համակողմանի վերլուծությունն ու դասակարգումը հնարավորություն են ընձեռում դիտարկել և բացահայտել դրանց տարաբնույթ ժխտական իմաստները համատեքստում: Վերջինների առավել ընդգրկուն լուսաբանումն ամբողջացնում է աշխատանքի տեսական արժեքը: Ուսումնասիրության արդյունքները կարող են իրենց նպաստը բերել լեզվի իմաստային միավորները տեսականորեն նկարագրելու խնդրում. մասնավորապես՝ ներակա ժխտման միջոցների, կիրառման ձևերի, իմաստային և գործաբանական արժեքի վերհանման և դրսևորման ոլորտները սահմանելու համար:

Աշխատանքի արդյունքները կարող են գործնական կիրառություն գտնել իմաստաբանության, գործաբանության, տեքստի մեկնաբանության դասընթացներում: Ուսումնասիրված նյութը կարող է նաև կիրառվել անգլերենի գործնական դասընթացներում՝ միջանձնային հարաբերությունների սահուն կարգավորմանն ուղղված հմտությունների զարգացման համար. քաղաքավարության, երկխոսային կանոնների պահպանման, ներակա եղանակով ժխտելու, մերժելու, խոսակցի կարծիքն անուղղակիորեն վիճարկելու ճիշտ ռազմավարության մշակման նպատակով:

**Աշխատանքի կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ծանոթագրություններից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են ուսումնասիրության նպատակը, առաջադրվող խնդիրները, թեմայի արդիականությունը, նորույթը, աշխատանքի տեսական արժեքն ու կիրառման ոլորտները:

Առաջին գլխում («Ժխտման կարգը. ժխտումն ուսումնասիրող տարբեր տեսություններ») ներկայացված է աշխատանքի տեսական հիմքը, որը ներառում է ժխտման կարգին նվիրված հայտնի տեսաբանների տարբեր տեսություններ, սահմանումներ և դասակարգումներ, ինչպես նաև դրանց առնչվող տարաբնույթ մեկնաբանություններ<sup>3</sup>:

Երկրորդ գլուխը («Ներակա ժխտում. ժխտման արտահայտումն անուղղակի միջոցներով») նվիրված է ներակա ժխտման արտահայտմանը բառային մակարդակում և բաղկացած է չորս ենթաբաժիններից:

Հիմք ընդունելով Ի. Մեշչանինովի, Ա. Սմիրնիցկու, Ա. Բոնդարկոյի, Օ.Եսպերսենի տեսությունները՝ աշխատանքում ժխտումը դիտարկել ենք որպես հասկացական կարգ՝ իմաստային և գործաբանական հայեցակերպերով: Ժխտումն արտահայտվում է լեզվի տարբեր մակարդակներում. ձևաբանական, բառային և շարահյուսական: Բառային մակարդակի քննությունը մեր ուսումնասիրության շրջանակներում ներառում է ժխտական ներիմաստով բառերը, հակադրական զույգերը, դարձվածքները և նախդրավոր բայական կառույցները:

Ներակա ժխտական իմաստով բառերը՝ հաստատական կազմով բառային միավորներն են (*dry, deaf, diffuse, forget, lack, loath, nude, object, oblivious, obscure, omit, trivial* և այլն), որոնց ժխտականությունը բառարանում արտահայտվում է ժխտական բառերի (*no, not* և այլն) կամ ածանցների միջոցով (*a-, ab-, anti-, contra-, counter-, dis-, de-, in-, ir-, il-, im-, -less, mal-, mis-, non-, un-, under-*). այսպես՝ *oblivious* – not aware of sth; not noticing sth; *deaf* - unable to hear at all or to hear well: Կան բառեր, որոնց բառարանային բացատրությունը տրվում է մեկ այլ ներակա

---

<sup>3</sup> Horn L. R. A natural history of negation. Chicago: University of Chicago Press, 1989; Jespersen O. Negation in English and other languages. Copenhagen, 1917; Wason P.S. Response to affirmative and negative binary statements // British Journal of Psychology, 52. University of Chicago, 1961; Смирницкий А. И. Морфология английского языка. Москва: Изд.-во лит. на иностр. яз., 1959; Хомский Н. О понятии правила грамматики // Новое в зарубежной лингвистике, вып. 4. Москва, 1965; Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка. Москва: Изд.-во иностранной литературы, 1955; Мещанинов И. И. Понятийные категории в языке // Труды военной ин.-та иностр. языков, 1945; Щерба Л. В. Языковая система и речевая деятельность. Ленинград: Наука, 1974.

ժխտական իմաստով բառով (*forget, miss, omit* և այլն). *forget* – to fail to remember: Նշված բառերի ժխտական իմաստը բացահայտվում է աստիճանական փոխակերպման շնորհիվ. *fail* - to not be successful in achieving or doing something:

ժխտական ներիմաստով բառերին միավորում է մեկ ընդհանուր հատկություն. դրանք ժխտական ներիմաստ են արտահայտում չունենալով որևէ արտակա ժխտականության ցուցիչ: Մյուս կողմից, ժխտական ներիմաստով բառերի բնույթը հակասական է այն առումով, որ դրանց իմաստ - կառուցվածք կապը միանշանակ չէ, քանի որ հաստատական կազմը կարող է ժխտական իմաստ արտահայտել, իսկ ժխտական կառուցվածքով կարող է փոխանցվել հաստատական իմաստ:

Չաճախ ժխտման նպատակով կիրառվող բառերը դրական գաղափարներ արտահայտող բառեր են: Այս երևույթը հիմնականում դրսևորվում է հակադրական զույգերում, որոնց միջոցով առավել հստակ է ընդգծվում հակադրվող գաղափարների տարբերությունը: Չակադրական զույգերի անդամներից յուրաքանչյուրը կարող է որպես ժխտական անդամ հանդես գալ՝ կախված համատեքստից, երկխոսության ընթացքից կամ խոսողի մտադրություններից: Ուստի հակադրական զույգերի իմաստներն առավել պարզորոշ են ընդգծվում հատկապես երկխոսության մեջ. A: *Is that seat free?* B: *It's occupied:* Այս երկխոսության մեջ *occupied* բառը, չունենալով ժխտական բառարանային սահմանում (*occupied* v. – 1. being used by sb, 2. busy, 3. controlled by people from another country, etc, using military force), ժխտական իմաստ է արտահայտում, քանի որ այն հնչում է ի պատասխան *Is that seat free?* հարցին: *Free* բառի բառարանային սահմանումը ժխտական է, թեև այս օրինակում այն կիրառված չէ ժխտական իմաստով. *free* v. not under the control or in the power of sb else; not restricted by anyone else: Անգլերենում ժխտում արտահայտող հակադրական զույգերի օրինակներ են *heavy/light, clean/dirty, empty/full, rough/gentle, free/occupied* և այլն:

Ներակա ժխտական իմաստով դարձվածքների միջոցով փոխանցվող ժխտումը լիովին ընկալելի է լսողի կամ ընթերցողի համար: Լինելով կայուն կապակցություններ, ներակա ժխտում արտահայտող դարձվածքները ժխտականությունն արտահայտում են հստակ և որոշակի (*remain aloof, when pigs fly, to have ants in one's pants, to have a big mouth, to back the wrong horse, with bare hands, to turn a blind eye, to turn a deaf ear, for the birds, carved in stone, wide of the mark* և այլն): Ներակա ժխտական իմաստով դարձվածքներն արտահայտում են նաև ժխտող համեմատություն, որի միջոցով մատնանշվում է բուն հատկանիշի բացակայությունը: Այսպես՝ *to need sb/sth like a hole in the head* (not to need sb/sth at

all), *as much chance as a wax cat in hell* (no chance at all), *as blind as a bat* (unaware), *like a bird* (without resistance or difficulty) և այլն: Նշված դարձվածքներն ունեն ժխտական իմաստներ, որոնք հիմնվում են համեմատության վրա:

Ներակա ժխտում է արտահայտվում նաև հետևյալ օրինակում՝ պատկերավոր համեմատության միջոցով. *“I have my own explanation of the cynical Biblical statement that it is as easy for a rich man to enter Heaven as for a camel to pass through the eye of a needle”* (Rawlings): Տվյալ օրինակում համեմատության միջոցով (*it is as easy for a rich man to enter Heaven as for a camel to pass through the eye of a needle*) ընդգծվում է քննարկվող երևույթի անհնարինությունը (*as for a camel to pass through the eye of a needle*), քանի որ «ուղտը չի կարող անցնել ասեղի անցքով»: Որոշ լեզվաբանների պնդմամբ ժխտող համեմատությունը դասվում է ոչ պատկերավոր համեմատությունների շարքին <sup>4</sup> և ունի տրամաբանական բնույթ: Մեր դիտարկմամբ, սակայն, ժխտող համեմատությունը և՛ պատկերավորման միջոց է, և՛ ունի տրամաբանական բնույթ, քանի որ համեմատությունն ինքնին պատկերավորման միջոց է, իսկ իմաստի (հատկապես քողարկված իմաստի) բացահայտումն, անշուշտ, ունի տրամաբանական բնույթ: Հետևապես, ոճական և տրամաբանական հատկանիշներն այս դեպքում միաձուլված են լեզվական մեկ երևույթի մեջ:

Թեև դարձվածքները պատկերավորման միջոցներ են և կրում են հուզարտահայտչական երանգներ, դրանց միջոցով արտահայտված ժխտական ասույթներում (ի տարբերություն սովորական ներակա ժխտումով ասույթների), բացակայում է *երկնտանքը, զգուշավորությունը, այլընտրանքը*. դրանք ավելի դիպուկ են և դրանցում ժխտական միտքն արտահայտվում է առանց «սողանքների»:

Ներակա ժխտական իմաստով նախդրավոր բայական կառույցներում (օրինակ՝ *to sit around, to wink at, to wave sth aside, to skate over, to stay around* և այլն) ժխտականությունը, հիմնականում, արտահայտվում է ոչ թե բայի, այլ նախդիրի միջոցով (*aside, away, off, out* և այլն), որոնց բառարանային բացատրություններում առկա են ժխտական բաղադրիչներ: Այսպես՝ *to opt sth out* արտահայտությունն ունի *to choose not to take part in sth* իմաստը, որի ժխտական իմաստն արտահայտված է հենց *out* (away from or not at home or their place) նախդիրի ներիմաստում, մինչդեռ *opt* (to choose to take a particular action) բառն ունի հաստատական նշանակություն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերակշռում են *out, off* և *aside* նախդիրները պարունակող ոչ բացահայտ

---

<sup>4</sup>Мезенин С. Конструкции современного английского языка, имеющие значение сравнения, автореф. дис. на соиск. учен. степ. канд. филол. наук. Москва, 1969.



ժխտական իմաստ արտահայտող կապակցությունները, որոնցում ժխտականությունն ավելի բացահայտ է: Այդպիսի կապակցություններ են՝ *hold off, warn sb off, cry off, chicken out, opt out, stay out, shut out, pike out, thrust aside, sweep aside, shrug aside, brush aside* և այլն:

Այսպիսով, աշխատանքում կատարված բառային միջոցների քննության և դրանց բնորոշ առանձնահատկությունների վերհանման արդյունքում ժխտական ներհմաստով միավորների շարքում առանձնացրել ենք բառեր, որոնց բառարանային սահմանումը տրվում է ոչ թե բացահայտ եղանակով, այլ ներակա ժխտական իմաստով բառերի միջոցով: Հիմք ընդունելով քննարկվող լեզվական միավորների իմաստային առանձնահատկությունները՝ կատարել ենք դասակարգում ըստ ներակայության աստիճանի՝ *ամբողջովին ներակա* և *մասնակի ներակա*: Դասակարգման հիմքում ընկած է ժխտական ներհմաստով բառերի կամ կապակցությունների ժխտական իմակի քողարկվածության աստիճանը, որի համաձայն *ամբողջովին ներակա* են այն միավորները, որոնք սահմանվում են ներակա ժխտական իմաստով բառի միջոցով: Այս դեպքում բառի ժխտական իմակն ամբողջովին քողարկված է: *Մասնակի ներակա* է այն բառային միավորների ժխտականությունը, որոնց բառարանային սահմանումը կատարվում է անմիջապես ժխտական բառի կամ ցուցիչի միջոցով:

Տվյալ դասակարգման համաձայն՝ *ամբողջովին ներակա ժխտական բառեր* են *prevent, quit, setback, privation, void, cease* և այլն: Այսպես՝ *prevent* նշանակում է՝ to stop sb from doing sth; to stop sth from happening: Տվյալ բառի սահմանումը կատարվում է *stop* բառի միջոցով, որն իր հերթին սահմանվում է՝ to no longer continue to do sth.; to make sb/sth no longer do sth: Այստեղ՝ ժխտական իմակի բացահայտումը կատարվում է աստիճանական փոխակերպման միջոցով, ինչի շնորհիվ «բացվում է» սահմանվող բառի իմաստը:

*Մասնակի ներակա* բառեր են՝ *evasive, oblivious, nude, obscure, bald, dry, diffuse, loath, trivial, object, forget, omit, lack* և այլն: Այսպես՝ *evasive* բառը, որը նշանակում է *not willing* to give clear answers to a question, համատեքստում կարող է դրսևորվել հետևյալ իմաստով. *I tried to draw her out about the shooting. She was evasive* (Rawlings): Այստեղ՝ *She was evasive* նախադասությունն արտահայտում է՝ *She was not willing to give clear answers* միտքը: Նշված երկու նախադասությունները հնարավոր է նաև կապել միմյանց *but* շաղկապի միջոցով, որն ավելի է ընդգծում և սաստկացնում հակադրությունը երկու ասույթների միջև՝ *I tried to draw her out about the shooting but she was evasive*: Թեև բերված օրինակում բացակայում է *but* շաղկապը, այնուամենայնիվ,

համատեքստը ենթադրում է վերջինի «քողարկված» իմաստը, ինչն էլ նպաստում է *evasive* բառի ժխտական ներիմաստի բացահայտմանն ու ընկալմանը:

Աշխատանքում սույն դասակարգմանն են ենթարկվում նաև դարձվածքներն ու նախդրավոր բայական կառույցները:

*Անբողջովին ներակա դարձվածքներ են*, օրինակ՝ *to have a big mouth* (not to keep secrets), *to have ants in one's pants* (to be very excited or impatient about sth and unable to stay still), *for the birds* (not important or practical), *when pigs fly* (never), *carved in stone* (unable to be changed), *wide of the mark* (not coming to the main point) և այլն: Նշված խմբի դարձվածքներում ներակայումն ավելի խորքային է. դարձվածքը կազմող բաղադրիչները, որպես առանձին անդամներ, ժխտում չեն պարունակում, սակայն հանդես գալով մեկ կապակցության ներքո՝ միավորվում են՝ ձեռք բերելով ժխտական իմաստ: Օրինակ՝ *when pigs fly* դարձվածքը, որն ունի *never* իմաստը, համապատասխան խոսքային միջավայրում կարող է որպես ժխտում կիրառվել ի պատասխան որևէ հարցի, առաջարկի կամ խնդրանքի և, մինչև այժմ ժամանակ, արտահայտել խոսողի վերաբերմունքը. A: “When will you join our party?” B: “When pigs fly”: Այս երկխոսության մեջ՝ *When pigs fly* պատասխանն ակնհայտորեն ժխտական է, քանի որ այն համարժեք է *never* բառին և արտահայտում է խոսողի բացասական դիրքորոշումը տրված հարցի վերաբերյալ:

*Մասնակի ներակա դարձվածքների* շարքին են դասվում՝ *to remain aloof* (not to become involved in sth), *to back the wrong horse* (to support sb that is not successful), *with bare hands* (without weapons or tools), *to turn a blind eye* (to pretend not to notice sth bad that is happening), *to turn a deaf ear* (to refuse/ ignore to listen to sb), *to avoid sb like a plague* (to try very hard not to meet sb) և այլն: Նշված խմբի դարձվածքների ներակայության աստիճանի մասնակի լինելը պայմանավորված է վերջինների կազմում *aloof, wrong, bare, blind, deaf, avoid* ժխտական իմաստով բաղադրիչների առկայությամբ: Այսպես՝ *to remain aloof* (not to become involved in sth) դարձվածքը ժխտական իմաստ է պարունակում և կարող է համեմատվել հայերենի *զերծ մնալ (չներգրավել)* արտահայտության հետ. դրանում որպես «հուշող» բաղադրիչ է հանդես գալիս *aloof* (not friendly or interested in other people) բառը. *He always remained aloof in such matters, that is his heritage from his good blood* (Rawlings): Այստեղ՝ *to remain aloof* դարձվածքի միջոցով արտահայտվում է ժխտական իմաստ, քանի որ *He always remained aloof in such matters* ասելով, խոսողը նկատի ունի հետևյալը՝ *He did not become involved in such matters*:

*Անբողջովին ներակա են* *above, aside, at, around, over, in, up* նախդիրներով կազմված բայական կառույցները. *rise above, brush aside, wink at, sit around, skate*

*over, stay in, store sth up* և այլն: Այսպես՝ *rise above* արտահայտությունն ունի ժխտական իմաստ (to not be affected by problems; to be wise enough not to do sth wrong or not to think the same as other people), թեև առանձին բաղադրիչները ժխտական չեն (*rise* - to come or go upwards; to reach a high or higher level և *above* - higher than sth; more than sth):

*Մասնակի ներակա* ժխտական իմաստով նախդրավոր բայական կառույցներ են *off* և *out* նախդիրներով կազմված կապակցությունները (*hold off, back off, warn off, cry off, lose out, bail out, shut out* և այլն), որոնցում բայի իմաստը հաստատական է, մինչդեռ նախդիրն ունի ժխտական իմաստ: Օրինակ՝ *hold off* արտահայտությունն ունի՝ *to not start, to not do sth immediately* իմաստը, որի ժխտականությունը «բխում» է *off* նախդրի իմաստից:

Ժխտում արտահայտող բառային միջոցների քննությունը ցույց է տալիս, որ ոչ բացահայտ եղանակով արտահայտվող ժխտումը ոչ միայն առանձնահատուկ է դրսևորման ձևերի առումով, այլև յուրահատուկ է դրանց ներակայության աստիճանն ու կիրառությունը: Ներակա ժխտումն արտահայտիչ է դառնում բառերի, դարձվածքների և նախդրավոր բայական կառույցների շնորհիվ, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում համապատասխան խոսքային միջավայրում անուղղակի կերպով արտահայտել ժխտական իմաստ: Առավել արտահայտչական են դարձվածքներն ու նախդրավոր բայական կառույցները, որոնք բուն իմաստից բացի կրում են նաև հուզական երանգներ: Բառային միջոցներով ներակա ժխտման արտահայտումը լայն հնարավորություններ է ընձեռում խոսողին՝ արտահայտելու իր մտքերն ու մտադրությունները:

Երրորդ գլուխը («Ներակա ժխտման գործաբանական հայեցակերպը») բաղկացած է երեք ենթաբաժիններից, որոնցում ուսումնասիրվում են ժխտական ներիմաստով ասույթների գործաբանական առանձնահատկությունները, դիտարկվում է հարցը, որպես ներակա ժխտման միջոց և կրկնակի ժխտումը՝ որպես հաստատման միջոց:

Ներակա ժխտական իմաստով ասույթների գործաբանական վերլուծությունը լայն ասպարեզ է բացում ժխտման ավելի խորքային հատկանիշները վերհանելու և քննելու առումով, քանի որ ներակա ժխտմամբ ասույթների միջոցով ոչ միայն հերքվում է որևէ երևույթի կամ առարկայի գոյությունը, այլև իրագործվում են այնպիսի փոխներգործական իրողություններ, ինչպիսիք են *մերժումը, անհամաձայնությունը, հակադրությունը*:

Այսպես՝ ներակա ժխտմամբ հետևյալ ասույթն արտաբերվում է *մերժում* արտահայտելու նպատակով.

A: *The Colonel asked for a whisky-and-soda:*

*“You’d better have one too, Amy,” he said.*

B: *“I prefer tea” Amy answered (Maugham).*

Այստեղ, *I prefer tea* ասելով, խոսողը հրաժարվում է *You’d better have one too (whisky-and-soda)* առաջարկից և, փոխարենն ասում է, որ թեյ է նախընտրում: Համատեքստից դուրս, որպես առանձին ասույթ՝ *I prefer tea* նախադասությունը որևէ կերպ ժխտական իմաստ չի արտահայտում, սակայն տվյալ խոսքային իրադրության մեջ ակնհայտ է վերջինի ներակա ժխտական իմաստը, քանի որ այն տրվել է *I do not like whisky-and-soda* պատասխանի փոխարեն: Հնչեցնելով *I prefer tea* պատասխանը՝ խոսողը միաժամանակ և՛ հայտնում է իր նախընտրության մասին և՛ մերժում իրեն տրված առաջարկը:

Ներակա ժխտական ասույթի միջոցով կարող է արտահայտվել խոսակցի *անհամաձայնությունը* խոսողի հետ.

A: *“Right now you are talking bombast, aren’t you?”*

B: *“I must respectfully contradict you. I am the voice of the future” (Michener).*

Այս տարբերակում «հաստատման չեզոքացումը» կատարվում է *contradict* (to say that sth that sb else has said is wrong, and that the opposite is true) բառի միջոցով. (B) խոսակիցը քաղաքավարի, սակայն հաստատուն կերպով, հակադրվում է իր զրուցակցին՝ արտահայտելով անհամաձայնություն:

*Ներակա ժխտական ասույթի միջոցով կարելի է արտահայտել նաև հակադրություն.*

A: *“He wants me to spy on the Teutonic knights”.*

B: *“I doubt that he would express it that way, Pawel” (Michener):*

Ակնհայտ է, որ (B) զրուցակիցը չի համաձայնում (A)-ի հետ, սակայն, փորձելով ավելի մեղմ արտահայտվել՝ կիրառում է *I doubt that he would express it that way* տարբերակը՝ *He would not express it that way* ասելու փոխարեն: Այստեղ *doubt* (the feeling of not believing sth) բառը կասկած հաղորդելու միջոցով ժխտում է հնչեցված միտքը: Երբեմն հակադրությունն ընդգծվում է նաև երկու մտքերի միջև *հակասություն* ստեղծելու միջոցով. *He had assured me that he was a finished driver and mechanic. I believe this was the first time he had ever driven a car (Rawlings):* Նշված օրինակում հերքվում է ասույթի կամխենթադրույթը և, խոսողն ունենալով հակառակ տպավորություն, կասկած է հայտնում՝ արտաբերելով հետևյալ ասույթը. *I believe this was the first time he had ever driven a car*, որտեղ *I believe* ասելով նա սաստկացնում է այն գաղափարը, որ քննարկվող անձը չի

համապատասխանում ‘*a finished driver and mechanic*’ բնորոշմանը և հերքում տվյալ միտքը:

Ներակա ժխտական իմաստով ասույթները, միաժամանակ, կրում են նաև լրացուցիչ իմաստներ, որոնք, ներազդելով խոսակցի վրա, արտահայտում են խոսողի վերաբերմունքն արտաբերվող ասույթի նկատմամբ. այդպիսիք են, մասնավորապես, *զարմանքը, բարկությունը, անորոշությունը*:

Այսպես՝ A: “*Will you go over to Paris and see Charlie?*”

B: “*I?, Fred is set on going*” (Maugham).

Այստեղ “I?” ասելով խոսակիցը շեշտում է իր *զարմանքը* և միաժամանակ հայտնում, որ ինքը չի պատրաստվում գնալ. Ֆրեդն է իր փոխարեն գնալու: Զարմանք արտահայտող ասույթները հուզարտահայտչական են:

Հուզարտահայտչական է նաև ներակա ժխտմամբ արտահայտվող *բարկությունը*.

A: “*When can we expect consumer goods to start flowing from the factories?*”

B: “*How can I be held to a specific date?*” (Michener)

Դետեյալ օրինակում ներակա ժխտման միջոցով արտահայտվում է *անորոշություն*.

A: “*Where did she go?*”

B: “*Who knows?*” (Michener)

Ներակա ժխտում պարունակող ասույթներում ժխտական իմաստն արտահայտվում է անուղղակիորեն, ինչը պայմանավորված է խոսողի՝ խոսակցին չվիրավորելու, կտրուկ կամ կոպիտ արտահայտություններից խուսափելու, քաղաքավարի հաղորդակցում ապահովելու ցանկությամբ: Այսպես՝ *You’re poor enough to hope for marriage with an heiress* (Michener) նախադասության մեջ տարվում են զուգահեռներ՝ *poor (enough)* և *heiress* բառերի միջև, ապա համեմատության միջոցով կատարվում է բացառում: Նշված ասույթի իմաստը համարժեք է հետևյալ նախադասությանը՝ *You cannot hope for marriage with an heiress as you are too poor*: Խոսողը ներակա եղանակով փորձում է խոսակցին համոզել, որ վերջինս չի կարող հավակնել ժառանգորդուհու հետ ամուսնության:

Դետեյալ օրինակում՝ խոսողն անուղղակիորեն ժխտում է խոսակցի կողմից իրեն տրված հարցը.

A: “*Would you allow your daughter to marry a townsman?*”

B: “*I’m nobility, Countess. Poor but noble. My family has always married with its own kind*” (Michener).

Այստեղ խոսողը, նշում է հնչեցված գաղափարի անհնարինությունը և չցանկանալով անպատեհ արտահայտությամբ վիրավորել զրուցակցին, մինևույն ժամանակ, խուսափում է ուղղակիորեն ժխտական պատասխանից՝ ոչ բացահայտ կերպով հակադրվելով զրուցակցին: Աույթի մակարդակում «անհնարինություն» է արտահայտվում նաև *I would rather ... than, it's better ... than* կառույցների միջոցով, ինչպես նաև պայմանական եղանակի միջոցով. *If I could I would go to the Holy Land tomorrow to fight him* (Michener): Նշված նախադասությամբ խոսողը շեշտում է գործողության անհնարինությունը, որը հատկապես ընդգծվում է *If I could* արտահայտությամբ:

Ժխտման անուղղակի միջոցների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում ներակա ժխտում արտահայտող հարցը, որն իրականում ճարտասանական հարցի մի տեսակ է և պատասխան չի ակնկալում: Ներակա ժխտում արտահայտող հարցերը կեղծ հարցական նախադասություններ են, քանի որ նպատակ ունեն ոչ թե ինչ-որ տեղեկություն ստանալու, այլ՝ մերժելու.

A: *"I will help you, when you go looking for Germans".*

B: *"Who said we were going to do that?"* (Michener)

Ակնհայտ է, որ *Who said we were going to do that?* հարցով արտահայտվում է իմաստային ներակա ժխտում: Այս հարցի միջոցով արտահայտվում է տարակուսանք, անհամաձայնություն այն մտքի վերաբերյալ, որ հնչեցվել է զրուցակցի կողմից: Ուստի՝ *Who said we were going to do that?* նշանակում է՝ *We are not going to look for Germans:*

Տարբեր համատեքստերում ժխտում արտահայտող ճարտասանական հարցը կարող է իմաստային տարբեր երանգներ հաղորդել. զարմանք, տարակուսանք, հեզմանք և այլն:

A: *"Did they pay for the five they took?" Pawell asked.*

B: *"Pay?" the husband snorted* (Michener).

Այստեղ, թերևս, ժխտումն ուղեկցվում է և՛ բարկությամբ, և՛ հեզմանքով, որտեղ, խոսողը, կրկնելով բուն թեմային առնչվող բառը հարցական հնչերանգով (*pay?*), ցույց է տալիս, որ դա չի կատարվել: Դրանում կարևոր դեր ունեն հարցական հնչերանգն ու դիմաշարժությունները, որոնք արտահայտվում են հեղինակի խոսքում՝ նկարագրության միջոցով (*the husband snorted*): Մինևույն ասույթը հաստատական կառույցում քննելով՝ համոզվում ենք, որ առանց հարցական նշանի հանդես գալու դեպքում նույնպես այն կարող է ժխտում արտահայտել, եթե արտաբերվի որոշակի հեզմական առոգանությամբ.

A: *"Did they pay for the five they took?" Pawell asked.*

B: *"Pay..." the husband snorted.*

Նման խոսքային միջավայրում, որտեղ հաղորդակցական գործընթացն ավելի շարժուն է, գործի են դրվում արտալեզվական տարբեր միջոցներ (հնչերանգ, շեշտադրում, հեզմական տոն, դիմաշարժություն), որոնք օգնում են ավելի պարզ և պատկերավոր կերպով արտահայտել սովյալ ասույթի ներակա իմաստը: որոնք էական դեր ունեն խոսակցի կողմից ասույթի ընկալման գործում:

Աշխատանքում քննվող հիմնական նյութը հատատական կառույցների միջոցով ժխտման արտահայտումն է և, քանի որ ժխտումն անընդհատ փոխկապվածության մեջ է հաստատման հետ, դիտարկվել է նաև հակառակ երևույթը, երբ երկու ժխտական կառույցների միջոցով արտահայտվում է հաստատական իմաստ: Այս երևույթն անգլերենում ունի կրկնակի ժխտում անվանումը (double negation): Այսպես՝ I wouldn't object if the factory workers got more (Michener) նախադասությունը պարունակում է երկու ժխտական բաղադրիչ՝ wouldn't և object, որոնցից առաջինը բացահայտ ժխտական է, իսկ երկրորդը՝ ոչ բացահայտ, ինչի արդյունքում արտահայտվում է հաստատում:

Կրկնակի ժխտումով ասույթներն ավելի հաստատուն կերպով են արտահայտում միևնույն միտքը, քան ցանկացած սովորական հաստատական նախադասություն: Այս առնչությամբ հետաքրքրական է Ս. Ջիզվարտի՝ կրկնակի ժխտման համեմատությունը «գրոհի» հետ, որի համաձայն՝ «դիմադրության հանդիպած հարձակումներն ապահովում են համոզմունքի հոգեբանական ամրությունը»<sup>5</sup>:

Կրկնակի ժխտման բնորոշումներից հետաքրքրական է նաև այն տեսակետը, որ «խոսողը ցանկանում է «սողանք» թողնել, որպեսզի անհրաժեշտության դեպքում ավելի հեշտությամբ շփոթեցնի զրուցակցին՝ եթե ասել է մի բան, մեկ ուրիշ բանի փոխարեն և սահուն անցում կատարի դեպի ճիշտ տարբերակը»<sup>6</sup>:

Հատկանշական է, որ հաստատական իմաստով կրկնակի ժխտմամբ ասույթները հատկապես գերակշռում են հարցական կառույցներում.

A: "I'll see what we are doing".

B: "Why not send an ambassador?" (Mischener)

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համարժեք կառույցներ կան նաև հայերենում.

– Կուզե՞ս երկաթուղու վրա գործ ունենաս, - հարցնում է նա:

<sup>5</sup> Sigwart C. Logic. London: S. Sonnenschein & Company. London, 1895.

<sup>6</sup> Seright O. D. Double negatives in standard modern English // American Speech, vol. 41, № 2. Chicago, 1966.

– Ինչու՞ չէ, – իմ փոխարեն պատասխանում է հայրս (Ձորյան):

Կրկնակի ժխտումով ասույթներում սովորաբար մեկ ժխտական բառը կամ ցուցիչը չեզոքացնում է մյուս ժխտական բառի բացասական նշանակությունը՝ արտահայտելով հաստատական իմաստ: Այսինքն՝ միևնույն մտքի երկու ժխտումներից մեկը թուլացնում է մյուսի ժխտականությունը, որն էլ պայմանավորված է լեզվի տրամաբանությամբ. եթե երկու ժխտական բառեր վերաբերում են միևնույն իրողությանը կամ գաղափարին, ապա արդյունքում արտահայտվում է հաստատական իմաստ:<sup>7</sup>

Թեև անգլերենի որոշ բարբառներում երկու ժխտական բաղադրիչով ասույթները կիրառելի են որպես ժխտում արտահայտելու միջոցներ, ժամանակակից անգլերենում նման կառույցները (I don't know nothing) կիրառելի չեն, փոխարենը լայն կիրառություն ունեն կրկնակի ժխտմամբ հաստատում արտահայտող ասույթները:

Կրկնակի ժխտումով ասույթները նաև կիրառվում են հնչեցվող ասույթի իսկությունը շեշտելու և միտքն ավելի հաստատուն դարձնելով նպատակով:

Այսպիսով, ներակա ժխտման քննությունը ցույց է տալիս, որ ուղղակի ժխտումից կամ մերժումից խուսափելու անհրաժեշտությունը հաճախ դրդում է խոսակիցներին կամ հաղորդակցվող կողմերին ընտրել այնպիսի միջոցներ, որոնք կլինեն համեմատաբար մեղմ և միևնույն ժամանակ հնարավորություն կընձեռեն ժխտելու, մերժելու, սեփական դիրքորոշումն ու բացասական վերաբերմունքն արտահայտելու:

Եզրակացության մեջ ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները, որոնք թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝

- Ներակա ժխտումը «թաքնված, քողարկված» լեզվական կարգ է, որի բացահայտումը կատարվում է իմաստային, տրամաբանական և գործաբանական վերլուծության միջոցով:

- Ներակա ժխտումը, որպես հասկացական կարգ, դրսևորվում է լեզվի տարբեր մակարդակներում՝ բառայինից մինչև տեքստային: Բառային մակարդակում ներակա ժխտում արտահայտող բառային միավորները (բառեր, հակադրական զույգեր, դարձվածքներ, նախդրավոր բայական կառույցներ) դասակարգվում են ըստ ներակայության աստիճանի՝ *ամբողջովին ներակա և մասնակի ներակա*: Սույն դասակարգումը որպես սկզբունք ընդունում է տվյալ բառի կամ բառային միավորի ժխտական իմակի «քողարկվածության»

---

<sup>7</sup> Kant I. Critique of pure reason. London: Kessinger Publishing, LLC, 1942.



աստիճանը, որն արտահայտվում է բառային միավորների իմաստային կառուցվածքում:

- Ներակա ժխտման իմաստային առանձնահատկությունների վերլուծությունն առավել ամբողջական է կատարվում գործաբանական հայեցակերպով, որում բացահայտվում են ներակա ժխտման այնպիսի կողմեր, ինչպիսիք են վերջինի արտահայտման նպատակները, հաղորդակցման գործընթացում կատարած դերը, բնույթը և դրանց միջոցով իրագործվող փոխներգործական այնպիսի իրողություններ, որոնք անմիջականորեն պայմանավորված են ասույթի կանխենթադրույթով, այնպիսի արտալեզվական գործոններով, ինչպիսիք են խոսակիցների մտադրություններն ու հաղորդակցական նպատակները, հուզական վիճակը, վերաբերմունքը: Այս ամենն առավել հստակ է դրսևորվում երկխոսության մեջ, մասնավորապես, ճարտասանական հարցի միջոցով, որը ներակա ժխտում արտահայտելու հիմնական գործաբանական միջոցներից մեկն է:

- Ներակա ժխտման արտահայտման ձևերի և դրանց բնորոշ իմաստային և գործաբանական առանձնահատկությունների վերհանումը թույլ է տալիս ներակա ժխտումը դասակարգել ըստ բնույթի. *բացասող ժխտում* (ժխտում է որոշակի առարկաների գոյությունը, հերքում որևէ իրողություն), *հակադրվող* ժխտում (համեմատության միջոցով բացահայտում է երևույթների անհամապատասխանությունը և առաջարկում փոխարինող գաղափարներ) և *մերժող ժխտում* (հրաժարվում է առաջարկվող մտքից՝ նշելով անհնարինության կամ անհամապատասխանության մասին), որոնցից յուրաքանչյուրն ընդգծվում է արտահայտման բնույթի յուրահատկությամբ:

- Աշխատանքում կատարված գուզադրությունը՝ հայերենի ներակա ժխտման միջոցների հետ ցույց է տալիս, որ անգլերենում և հայերենում կան ներակա ժխտում արտահայտող համարժեք կառույցներ, որոնց առկայությունը հնարավորություն է տալիս նմանությունների հարթության վրա վեր հանել անգլերենի ներակա ժխտմանը բնորոշ առանձնահատկությունները և մեկնաբանել վերջինի տարբեր կողմերը:

**Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. On the Semantic Category of Negation in Modern English // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում (գիտական աշխատությունների ժողովածու), № 5, Երևան, ԵՊՀ հրատ., 2004, էջ 43-54:
2. Double Negation in Modern English // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում (գիտական աշխատությունների ժողովածու), № 6, Երևան, ԵՊՀ հրատ., 2005, էջ 10-16:
3. Ժխտումը և դրա արտահայտման ոչ բացահայտ միջոցները ժամանակակից անգլերենում և հայերենում // Օտար լեզուները Հայաստանում (գիտամեթոդական հանդես), № 4-5, Երևան, ԿԱԻ հրատ., 2009, էջ 104-112:
4. Ոչ բացահայտ ժխտումը դարձվածային արտահայտությունների միջոցով // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում (գիտական աշխատությունների ժողովածու), № 11, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 174-187:
5. Իմաստային ժխտումը գործաբանական հայեցակետով // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում (գիտական աշխատությունների ժողովածու), № 13, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 123-131:
6. Հարցը որպես ոչ բացահայտ ժխտման միջոց // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում (գիտական հանդես) № 15, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 116-122:

**САРОЯН САТЕНИК НОРИКОВНА**

**КАТЕГОРИЯ СЕМАНТИЧЕСКОГО ОТРИЦАНИЯ И СРЕДСТВА  
ЕГО ВЫРАЖЕНИЯ  
В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ**

**Диссертация на соискание ученой степени  
кандидата филологических наук  
по специальности 10.02.07 - “Германские языки”**

**Защита состоится 5 ноября 2014 г. в 11:00 на заседании  
специализированного совета 009 “Иностранные языки” ВАК РА при  
Ереванском государственном университете (ул. Алека Манукяна, 1)**

**РЕЗЮМЕ**

Реферируемая диссертация посвящена изучению средств выражения категории семантического отрицания в современном английском языке, которая рассматривается как имплицитное отрицание и выявляется в семантической структуре определенных языковых единиц.

Целью настоящей работы является выявление и комплексное изучение средств выражения имплицитного отрицания на разных уровнях языка, определение их семантических и прагматических особенностей, а также места и роли в процессе коммуникации.

Актуальность темы исследования определяется особым интересом в лингвистике к имплицитным категориям вообще и к средствам выражения имплицитного отрицания в частности, а также недостаточной его изученностью с точки зрения прагматической значимости.

Научная новизна диссертации состоит в попытке классификации типов семантического отрицания, выявлении их семантических и прагматических особенностей. В ней впервые проводится комплексное исследование имплицитных средств выражения отрицания на разных уровнях языка.

Теоретическая значимость работы заключается в выявлении и систематизации средств выражения имплицитного отрицания, функций, выполняемых высказываниями с имплицитным отрицанием и в определении лингвистических и экстралингвистических факторов, воздействующих на процесс выражения и восприятия имплицитного отрицания.

Практическая значимость исследования заключается в том, что ее результаты могут быть использованы в лекционных курсах по семантике, прагмалингвистике и интерпретации текста, а содержащийся в ней

языковой материал может послужить основанием для развития стратегий по регулированию межличностных отношений с учетом норм диалогического общения.

Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной теоретической литературы и словарей, а также списка источников исследовательского материала.

Во введении обосновывается выбор темы, определяются цели и задачи исследования, его актуальность и новизна, теоретическая и практическая значимость, методы анализа и материал исследования.

Первая глава содержит теоретические предпосылки исследования, которые послужили основой для данной работы, а также разные точки зрения на суть данного явления в языке.

Во второй главе проводится семантический анализ лексических средств (включая слова, фразовые глаголы, антонимичные пары и фразеологические единицы) выражения скрытого отрицания с применением метода сплошной выборки из толкового словаря, методов лексической трансформации и ступенчатой идентификации, а также компонентного анализа.

Третья глава посвящена изучению прагматического аспекта имплицитного отрицания, его функций в речи, с целью выявления лингвистических и экстралингвистических факторов, обуславливающих его проявление в процессе коммуникации.

В главе рассматриваются риторический вопрос как средство выражения имплицитного отрицания и двойное отрицание.

В заключении формулируются основные выводы проведенного исследования.

**SATENIK SAROYAN**

**THE CATEGORY OF SEMANTIC NEGATION AND MEANS OF ITS  
EXPRESSION IN MODERN ENGLISH**

**SUMMARY**

The present paper is devoted to the study of implicit negation in modern English and means of its expression from semantic and pragmatic points of view.

The aim of the research is to define the category of semantic negation, to single out implicit means of negating, to categorize the types of implicit negation and to determine the role of implicit negation in communication. An attempt has been made to reveal the semantic and pragmatic aspects of implicit negation, to study the language environment, as well as outline the linguistic and extralinguistic factors having an impact on the communication process.

The research can bring novelty to the field, as it includes a complex study of different means of expressing implicit negation, disagreement, refusal, etc on different levels of language: the morphological level (where the expression is more or less explicit, thus, we have not expanded much on this in our paper), the lexical level (including the level of words, contraries, idiomatic expressions and phrasal verbs) and the syntactic level (including different linguistic constructions that can express disagreement, negation, refusal, denial etc).

The theoretical value of the work consists in the detailed study of different means of expressing negation through constructions that are devoid of negative markers. This can serve as supplementary in practice and material for theoretical lectures on semantics, pragmatics and text interpretation.

The practical value of the research is that it can be applied in developing skills of harmonious social interaction, following conversation maxims, polite

expression of contradiction in conversation or opposing the partner's viewpoint indirectly, as a strategic tool in interpersonal relations.

The paper consists of an introduction, three chapters, conclusions and the list of bibliographical sources.

Chapter one includes the theoretical background of the research representing different theories on the nature of negation.

Chapter two is devoted to the study of lexical means of expressing implicit negation, including words, oppositional pairs, idioms, phrasal verbs, which have been classified according to the degree of implicitness.

Chapter three studies semantic negation from the pragmatic perspective, questions expressing indirect negation and double negation.

The Conclusion contains the main findings of the research.

The study shows that many statements, affirmative in form, can express negation, depending on the speaker's intentions.

A handwritten signature in black ink, appearing to read 'U. Ueyf'. The signature is written in a cursive style with a large, sweeping initial 'U' and a long, horizontal flourish extending to the right.